ԴԻՕՔՍԻՆՆԵՐ ԵՒ ՖՈՒՐԱՆՆԵՐ

Դիօքսիններն ու ֆուրանները շատ վտանգավոր թունավոր քիմիական նյութեր են: Դրանք հատուկ չեն արտադրվում, այլ առաջանում են որպես կողմնակի արդյունք որոշ գործընթացների ժամանակ: Քանակով քիչ լինելով՝ կարող են շատ մեծ վնաս հասցնել:

ԱՌԱՋԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

- Արդյունաբերական այրման ընթացքում (թափոնների, պլաստիկի, քիմիական նյութերի այրում)
- Կենցաղային աղբի բաց այրման ժամանակ
- Մետաղների արտադրության և վերամշակման ընթացքում
- Քիմիական նյութերի, թունաքիմիկատների արտադրության ժամանակ
- Ծխելու և վառելիքի ոչ լիարժեք այրման դեպքում









ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Դիօքսինները կուտակվում են մարդու օրգանիզմում և կարող են առաջացնել՝

- Քաղցկեղի առաջացման բարձր ռիսկ
- Հորմոնալ խանգարումներ
- Իմունային համակարգի թուլացում
- Վերարտադրողական խնդիրներ
- Երեխաների զարգացման խանգարումներ
- Դրանք հատկապես վտանգավոր են հղիների և երեխաների համար:









ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ

- Կուտակվում են հողի և ջրի մեջ
- Մտնում են սննդային շղթա (ձուկ, միս, կաթնամթերք)
- Երկար ժամանակ չեն քայքայվում բնության մեջ
- Վնասում են կենդանական և բուսական աշխարհը











ԻՆՉՊԵՍ ԽՈՒՍԱՓԵԼ ԴՐԱՆՑ ԳՈՅԱՑՈՒՄԻՑ

- Չայրել աղբը, հատկապես պլաստիկը
- Զբաղվել աղբի տեսակավորմամբ և վերամշակմամբ
- Չօգտագործել անորակ վառելիք և բաց կրակով այրում
- Նախընտրել անվտանգ, էկոլոգիապես մաքուր արտադրանք
- Պահանջել վերահսկողություն արդյունաբերական արտանետումների նկատմամբ
- Տեղեկացված լինել և տարածել ճիշտ տեղեկատվություն







Սույն տեղեկատվական նյութը ստեղծվել է «Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի» ՀԿ-ի կողմից՝GEF ID 10924 ««Կայուն օրգանական աղտոտիչների մասին» Ստոկհոլմի կոնվենցիայի իրականացման ազգային ծրագրի վերանայում և թարմացում Ալբանիայում, Հայաստանում և Ղազախստանում»» հնարավորության ընձեռնմանն ուղղված գործունեության նախագծի շրջանակում:

«Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի»
ՀՀ, ք. Երևան, 0019, Բաղրամյան պող. 24/2
Էլ. փոստ՝ officeawhhe@gmail.com
Վեբ կայք՝ www. awhhe.am
ԵՐԵՎԱՆ 2026